ՏԵՂԵԿԱՆՔ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

Ընդունված է Ազգային Ժողովի կողմից
Հանրապետության Նախագահի
առարկություններով և առաջարկություններով
3 փետրվարի 1997 թ.

ՄԱՐԴՈՒ ԻՄՈՒՆԱՅԻՆ ԱՆԲԱՎԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՎԻՐՈՒՍԻՑ ԱՌԱՋԱՑԱԾ ՀԻՎԱՆԴՈՒԹՅԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՄԱՍԻՆ

Սույն օրենքը սահմանում է մարդու իմունային անբավարարության վիրուսից առաջացած հիվանդության կանխարգելման, ախտորոշման և հսկողության իրականացման կարգը, ինչպես նաև մարդու իմունային անբավարարության վիրուսից առաջացած հիվանդության կանխարգելման կազմակերպական, իրավական, տնտեսական և ֆինանսական հիմունքները:

Գ Լ Ո Ւ Խ 1

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 1. Սույն օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունները

Սույն օրենքում օգտագործվում են հետևյալ հիմնական հասկացությունները.

մարդու իմունային անբավարարության վիրուս (այսուհետ՝ ՄԻԱՎ)՝ վիրուս, որն ախտահարում է մարդու իմունային համակարգը և հանգեցնում իմունային անբավարարության համախտանիշի առաջացմանն ու զարգացմանը.

ՄԻԱՎ-ի վարակ՝ երկարատև ընթացքով քրոնիկ վարակիչ հիվանդություն, որի հարուցիչը ՄԻԱՎ-ն է.

ձեռքբերովի իմունային անբավարարության համախտանիշ (այսուհետ՝ ՁԻԱՀ)՝ հիվանդություն, որը զարգանում է ՄԻԱՎ-ով վարակված մարդկանց մեջ, համարվում է ՄԻԱՎ-ի վարակի վերջին փուլը, բնորոշվում է իմունային համակարգի գործունեության խաթարմամբ, որի հետևանքով օրգանիզմը դառնում է անպաշտպան զանազան վարակիչ և ուռուցքային հիվանդությունների նկատմամբ.

ՄԻԱՎ-ով վարակված անձ՝ մարդ, որի օրգանիզմում հայտնաբերվել են մարդու իմունային անբավարարության վիրուսը կամ վիրուսի նկատմամբ առաջացած հակամարմինները: ՄԻԱՎ-ով վարակված անձը, չունենալով համախտանիշի արտաքին նշաններ, համարվում է վարակի աղբյուր.

ՁԻԱՀ-ով հիվանդ՝ մարդ, որն ունի մարդու իմունային անբավարարության վիրուսով պայմանավորված իմունային համակարգի խոր ախտահարում և դրա հետևանքով առաջացած ախտաբանական դրսևորումներ:

(1-ին հոդվածը խմբ. 19.03.09 ՀՕ-63-Ն)

Հոդված 2. ՁԻԱՀ-ի կանխարգելման ծառայությունը

Հայաստանի Հանրապետությունում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելումն իրականացնում են պետական և տեղական ինքնակառավարման մարմինները՝ օրենքով սահմանված կարգով իրենց վերապահված լիազորությունների շրջանակներում, ինչպես նաև առողջապահական, կրթական և այլ կազմակերպություններ (անկախ կազմակերպական-իրավական ձևից) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ իրենց վերապահված իրավասությունների սահմաններում:

~~*Հայաստանի Հանրապետության բնակչության ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելման և մոնիթորինգի նպատակով Հայաստանի Հանրապետությունում գործում է ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոնը (այսուհետ՝ ՁԻԱՀ-ի ԿՀԿ):*~~*(Պարբերությունն ուժը կորցրել է)*

ՄԻԱՎ-ի վարակի կանխարգելման միջոցառումների անցկացման և հատկացված միջոցների արդյունավետ օգտագործման համար Հայաստանի Հանրապետության առողջապահության բնագավառի պետական լիազոր մարմին~~լիազորված պետական մարմինը~~ մշակում է պետական նպատակային ծրագիր, որը հաստատում է կառավարությունը:

ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի դեմ պայքարի գործին կարող են մասնակցել ֆիզիկական և իրավաբանական անձինք (այդ թվում՝ օտարերկրյա քաղաքացիները, քաղաքացիություն չունեցող անձինք, օտարերկրյա և միջազգային կազմակերպությունները), բարեգործները (ֆիզիկական և իրավաբանական անձինք, այդ թվում՝ օտարերկրյա քաղաքացիները, քաղաքացիություն չունեցող անձինք, օտարերկրյա և միջազգային բարեգործական կազմակերպությունները):

(2-րդ հոդվածը խմբ. 11.10.00 ՀՕ-92, 19.03.09 ՀՕ-63-Ն)

Հոդված 3. Սույն օրենքի գործողության ոլորտը

Սույն օրենքը տարածվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիների, Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվող օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց (այսուհետև՝ անձինք), ինչպես նաև Հայաստանի Հանրապետության տարածքում գործող ձեռնարկությունների, հիմնարկների և կազմակերպությունների (անկախ սեփականության ձևից) վրա:

Հոդված 4. Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորությունները ՁԻԱՀ-ի կանխարգելման բնագավառում

Հայաստանի Հանրապետության կառավարությունը՝

ա) պարբերաբար տեղեկացնում է բնակչությանը ՁԻԱՀ-ի կանխարգելման միջոցառումների մասին.

բ) իրականացնում է ՁԻԱՀ-ի համաճարակային հսկողություն՝ Հայաստանի Հանրապետության տարածքում լիազորված պետական մարմինների միջոցով.

գ) հաստատում է Հայաստանի Հանրապետությունում ՄԻԱՎ-ով վարակված անձանց և ՁԻԱՀ-ով հիվանդների որակյալ մասնագիտացված բժշկական օգնության և սպասարկման նպատակային ծրագրերը.

դ) պայմաններ է ստեղծում ՁԻԱՀ-ի գիտական և գործնական հետազոտությունների համար.

ե) իրականացնում է դեռահասների բարոյական և սեռական դաստիարակությանն ուղղված միջոցառումներ, այդ թվում՝ ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելմանը վերաբերող թեմատիկ հարցերը կրթական ծրագրերում ընդգրկելու միջոցով.

զ) ստեղծում է պայմաններ ՁԻԱՀ-ի կանխարգելման բնագավառի կադրերի պատրաստման համար.

է) Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերին համապատասխան տեղեկատվություն է փոխանակում ՄԻԱՎ-ի և ՁԻԱՀ-ի տարածվածության մասին.

ը) ***(կետն ուժը կորցրել է 25.10.17 ՀՕ-149-Ն)***

թ) մշակում և իրականացնում է Հայաստանի Հանրապետության տարածքում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի դեմ ձեռնարկվող միջգերատեսչական միջոցառումները՝ ՄԻԱՎ-ի վարակի կանխարգելման վերաբերյալ պետական նպատակային ծրագրի շրջանակներում.

ժ) ապահովում է ՄԻԱՎ-ի վարակի հայտնաբերման նպատակով կատարվող բժշկական հետազոտությունների մատչելիությունը, այդ թվում՝ ՄԻԱՎ-ի վերաբերյալ անանուն հետազոտությունը, որը զուգորդվում է նախաթեսթային և հետթեսթային խորհրդատվության տրամադրման հետ: Նախաթեսթային և հետթեսթային խորհրդատվության տրամադրման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության առողջապահության բնագավառի պետական լիազոր մարմինը~~լիազորված պետական մարմինը~~.

ժա) սահմանում է կալանավորված անձանց և դատապարտյալների ՄԻԱՎ վարակի վերաբերյալ բուժաշխատողների կողմից նախաթեստային և հետթեստային խորհրդատվության և հետազոտության իրականացման կարգը:

(4-րդ հոդվածը լրաց. 09.02.00 ՀՕ-32, 19.03.09 ՀՕ-63-Ն, 11.09.12 ՀՕ-181-Ն, փոփ. 25.10.17 ՀՕ-149-Ն)

Հոդված 5. ՁԻԱՀ-ի կանխարգելման և բուժման ծրագրերի ֆինանսավորումը

ՁԻԱՀ-ի կանխարգելման և բուժման ծրագրերի պետական ֆինանսավորումը դիտվում է որպես առաջնային՝ ելնելով հասարակության, ինչպես նաև անձանց կյանքի և առողջության անվտանգության ապահովման անհրաժեշտությունից:

ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելման, ՄԻԱՎ-ով վարակված անձանց բուժման և սոցիալական պաշտպանվածության ֆինանսավորումը իրականացվում է պետական բյուջեի միջոցների հաշվին՝ պետական նպատակային ծրագրերի շրջանակներում, ինչպես նաև օրենքով չարգելված այլ միջոցների հաշվին:

(5-րդ հոդվածը լրաց. 11.10.00 ՀՕ-92, խմբ. 19.03.09 ՀՕ-63-Ն)

Հոդված 6. ՄԻԱՎ-ով վարակված անձանց իրավունքների և ազատությունների պաշտպանության երաշխիքները

Անձի ՄԻԱՎ-ով վարակված լինելու փաստը չի կարող հիմք հանդիսանալ նրա իրավունքների և ազատությունների սահմանափակման համար՝ բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

Հոդված 7. Օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց՝ Հայաստանի Հանրապետություն մուտք գործելու պայմանները

(7-րդ հոդվածն ուժը կորցրել է 19.03.09 ՀՕ-63-Ն)

Հոդված 8. ՄԻԱՎ-ով վարակված օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց բուժումը

(վերնագիրը խմբ. 19.03.09 ՀՕ-63-Ն)

Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվող օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց օրգանիզմում ՄԻԱՎ-ի հայտնաբերման դեպքում նրանց բուժումը կազմակերպվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

(մասն ուժը կորցրել է 25.10.17 ՀՕ-149-Ն)

(8-րդ հոդվածը լրաց. 09.02.00 ՀՕ-32, խմբ. 19.03.09 ՀՕ-63-Ն, փոփ. 25.10.17 ՀՕ-149-Ն)

Հոդված 9. Միջազգային պայմանագրերի գործողությունը

(վերնագիրը խմբ. 25.10.17 ՀՕ-149-Ն)

Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրերի և սույն օրենքի նորմերի միջև հակասության դեպքում կիրառվում են միջազգային պայմանագրերի նորմերը:

(9-րդ հոդվածը խմբ. 25.10.17 ՀՕ-149-Ն)

Գ Լ Ո Ւ Խ 2

ՄԻԱՎ-Ի ՀԱՅՏՆԱԲԵՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԿԱՏԱՐՎՈՂ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ԿԱՐԳԸ

Հոդված 10. Լաբորատոր հետազոտությունները

ՄԻԱՎ-ի հայտնաբերմանն ուղղված լաբորատոր հետազոտությունները կատարվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով լիցենզավորված բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողների կողմից~~առողջապահական ձեռնարկություններում~~ (անկախ սեփականության ձևից):

ՄԻԱՎ-ի հայտնաբերմանն ուղղված բժշկական հետազոտության դրական արդյունքի դեպքում կատարվում է կրկնակի բժշկական հետազոտություն Հայաստանի Հանրապետության առողջապահության բնագավառի պետական լիազոր մարմնի կողմից սահմանված գործունեության ընթացակարգերին և կլինիկական ուղեցույցերին համապատասխան:~~ՄԻԱՎ-ի լաբորատոր~~

~~հետազոտության դրական արդյունքների դեպքում ՁԻԱՀ-ի ԿՀԿ-ի կողմից պարտադիր կարգով կատարվում է կրկնակի հետազոտություն:~~

ՄԻԱՎ-ի հայտնաբերման լաբորատոր հետազոտությունները կամավոր են և անանուն՝ բացառությամբ սույն օրենքի 11 հոդվածով նախատեսված դեպքերի:

Այն անձինք, որոնց պետք է ներարկեն արյուն, արյան բաղադրամասեր կամ կենսաբանական հեղուկներ, փոխպատվաստեն օրգաններ և հյուսվածքներ, կարող են պահանջել դրանց կրկնակի լաբորատոր հետազոտություն՝ ՄԻԱՎ-ի հայտնաբերման նպատակով:

ՄԻԱՎ-ի վերաբերյալ լաբորատոր հետազոտությունը զուգորդվում է նախաթեսթային և հետթեսթային խորհրդատվությամբ:

Մինչև 14 տարեկան երեխաների հետազոտությունը կատարվում է օրենքով սահմանված կարգով նրանց օրինական ներկայացուցիչների դիմումով կամ համաձայնությամբ, իսկ 14-18 տարեկան երեխաներինը՝ նրանց դիմումով կամ համաձայնությամբ, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

(10-րդ հոդվածը լրաց. 19.03.09 ՀՕ-63-Ն)

Հոդված 11. ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտության ենթակա խմբերը

(վերնագիրը խմբ. 19.03.09 ՀՕ-63-Ն)

Պարտադիր բժշկական խորհրդատվության և հետազոտության ենթակա են՝

ա) արյան, կենսաբանական հեղուկների, հյուսվածքների և օրգանների դոնորները.

բ) ՄԻԱՎ-ի վարակ ունեցող մայրերից ծնված երեխաները:

Բուժաշխատողների կողմից ՄԻԱՎ-ի վերաբերյալ խորհրդատվություն և հետազոտություն տրամադրվում է՝

ա) հղի կանանց.

բ) սեռավարակակիրներին.

գ) թմրամոլներին.

դ) կալանավորված անձանց և դատապարտյալներին:

Բնակչության բոլոր խմբերն իրավունք ունեն ստանալու ՄԻԱՎ-ի վերաբերյալ կամավոր խորհրդատվություն և հետազոտություն:

Հայաստանի Հանրապետության առողջապահության բնագավառի պետական լիազոր մարմինը~~Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական մարմինը~~ սահմանում է սույն հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ մասերով սահմանված խորհրդատվության և հետազոտության կարգերը, բացառությամբ 2-րդ մասի «դ» կետի:

(11-րդ հոդվածը փոփ. 11.10.00 ՀՕ-92, խմբ. 19.03.09 ՀՕ-63-Ն, փոփ., լրաց. 11.09.12 ՀՕ-181-Ն)

Գ Լ Ո Ւ Խ 3

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԲԵՐՈՒՄՈՎ ՄԻԱՎ-ՈՎ ՎԱՐԱԿՎԵԼՈՒ ՎՏԱՆԳԻՆ ԵՆԹԱԿԱ ԱՆՁԱՆՑ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ

Հոդված 12. ՄԻԱՎ-ով վարակվելու վտանգին ենթակա անձանց սոցիալական պաշտպանվածությունն աշխատանքի բնագավառում

Ձեռնարկությունների, հիմնարկների և կազմակերպությունների ՄԻԱՎ-ով վարակված անձանց ախտորոշումն ու բուժումն ապահովող աշխատողների, ինչպես նաև այն աշխատողների համար, որոնց աշխատանքը կապված է ՄԻԱՎ պարունակող նյութերի հետ, սահմանվում է

ա) հավելավճար աշխատավարձի նկատմամբ.

բ) կրճատված աշխատանքային օր.

գ) լրացուցիչ վարձատրություն.

դ) լրացուցիչ արձակուրդ:

Վերոհիշյալ արտոնությունները տալու պայմանները և կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողներըԱռողջապահական կազմակերպությունները պարտավոր են ապահովել ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտություն անցնող, ՄԻԱՎ-ով վարակված անձանց, ինչպես նաև բուժաշխատողների պարտականությունների կատարման համար անվտանգության անհրաժեշտ միջոցները և պայմանները՝ Հայաստանի Հանրապետության առողջապահության բնագավառի պետական լիազոր մարմնիլիազորված պետական մարմնի սահմանած կարգով:

(12-րդ հոդվածը խմբ. 11.10.00 ՀՕ-92, 19.03.09 ՀՕ-63-Ն, փոփ. 03.10.11 ՀՕ-257-Ն)

Հոդված 13. Բժշկական օգնություն և սպասարկում ստանալիս կամ ցուցաբերելիս ՄԻԱՎ-ով վարակված անձանց պատճառված վնասի փոխհատուցման իրավունքը

Բժշկական օգնություն և սպասարկում ստանալիս կամ ցուցաբերելիս ՄԻԱՎ-ով վարակվելու դեպքում անձինք իրավունք ունեն պատճառված վնասի փոխհատուցման՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Գ Լ Ո Ւ Խ 4

ՄԻԱՎ-ՈՎ ՎԱՐԱԿՎԱԾ ԱՆՁԱՆՑ ԵՎ ՆՐԱՆՑ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հոդված 14. ՄԻԱՎ-ով վարակված անձանց իրավունքները

ՄԻԱՎ-ով վարակված անձինք իրավունք ունեն՝

ա) ստանալ հետազոտության արդյունքների մասին գրավոր տեղեկություններ.

բ) ստանալ ոչ խտրական վերաբերմունք.

գ) պահանջել բժշկական գաղտնիության պահպանում՝ բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերի.

դ) շարունակել աշխատել՝ բացառությամբ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված դեպքերի.

ե) ստանալ համապատասխան խորհրդատվություն, ծանոթանալ ՄԻԱՎ-ի տարածումը բացառող նախազգուշական միջոցառումներին:

ՄԻԱՎ-ով վարակված անձինք առանց իրենց գրավոր համաձայնության չեն կարող լինել գիտական փորձերի և հետազոտությունների օբյեկտ:

Հոդված 14.1 ՄԻԱՎ-ով վարակված և ՁԻԱՀ-ով հիվանդ անձանց վերաբերյալ բժշկական տեղեկատվության գաղտնիությունը և դրա փոխանցմանը ներկայացվող պահանջները

1. ՄԻԱՎ-ի հայտնաբերմանն ուղղված բժշկական հետազոտության արդյունքում հայտնի դարձած բժշկական գաղտնիք համարվող տվյալները բժշկական կազմակերպության բժշկի կողմից տրամադրվում են հետազոտվող անձին, իսկ մինչև 14 տարեկան հետազոտվող անչափահասին՝ օրենքով սահմանված կարգով:

2. ՄԻԱՎ-ի դրական կարգավիճակի հայտնաբերման դեպքում բժշկական կազմակերպության բժիշկը անձին գրավոր տեղեկացնում է ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի փոխանցման կանխարգելման կանոնների պահպանման անհրաժեշտության վերաբերյալ՝ տրամադրելով Հայաստանի Հանրապետության առողջապահության բնագավառի պետական լիազոր մարմնի կողմից հաստատված իրազեկման թերթիկը:

3. ՄԻԱՎ-ի դրական կարգավիճակի հայտնաբերման դեպքում այդ մասին, ինչպես նաև ՄԻԱՎ-ի կարգավիճակը որոշելու նպատակով բժշկական հետազոտություն անցնելու անհրաժեշտության մասին բժշկական կազմակերպության բժիշկը ՄԻԱՎ-ով վարակված կամ ՁԻԱՀ-ով հիվանդ անձի ամուսնուն կամ զուգընկերոջը կարող է տեղեկացնել այն դեպքերում, երբ՝

1) ՄԻԱՎ-ով վարակված կամ ՁԻԱՀ-ով հիվանդ անձը չի ցանկանում իր կարգավիճակի մասին անձամբ հայտնել իր ամուսնուն կամ զուգընկերոջը և գրավոր կարգով տալիս է ամուսնու կամ զուգընկերոջ կոնտակտային տվյալները, ինչպես նաև գրավոր համաձայնություն իր կարգավիճակի բացահայտումով կամ առանց բացահայտման ամուսնուն կամ զուգընկերոջը տեղեկացնելու ՄԻԱՎ-ի կարգավիճակը որոշելու նպատակով բժշկական հետազոտություն անցնելու անհրաժեշտության մասին.

2) ՄԻԱՎ-ով վարակված կամ ՁԻԱՀ-ով հիվանդ անձն իր կարգավիճակի մասին ցանկանում է հայտնել իր ամուսնուն կամ զուգընկերոջը, ինչի մասին ՄԻԱՎ-ով վարակված կամ ՁԻԱՀ-ով հիվանդ անձի և բժշկի միջև տեղեկացման ժամկետի և բժշկի հետագա քայլերի վերաբերյալ ձեռք է բերվում գրավոր համաձայնություն, սակայն գրավոր համաձայնությամբ որոշված՝ ՄԻԱՎ-ով վարակված կամ ՁԻԱՀ-ով հիվանդ անձի կողմից իր ամուսնուն կամ զուգընկերոջը տեղեկացնելու ժամկետն ավարտվել է, և ՄԻԱՎ-ով վարակված կամ ՁԻԱՀ-ով հիվանդ անձի ամուսինը կամ զուգընկերը չի ներկայացել ՄԻԱՎ-ի կարգավիճակը որոշելու նպատակով բժշկական հետազոտություն անցնելու համար: Այս դեպքում բժիշկը, ըստ ՄԻԱՎ-ով վարակված կամ ՁԻԱՀ-ով հիվանդ անձի կողմից գրավոր կարգով ներկայացված կոնտակտային տվյալների, ինչպես նաև գրավոր համաձայնությամբ իր

կարգավիճակի բացահայտումով կամ առանց բացահայտման վերջինիս ամուսնուն կամ զուգընկերոջը հրավիրում է ՄԻԱՎ-ի կարգավիճակը պարզելու նպատակով հետազոտության անցկացման.

3) ՄԻԱՎ-ով վարակված անձը տվել է գրավոր համաձայնություն՝ իր ներկայությամբ ամուսնուն կամ զուգընկերոջը նրա կարգավիճակը բացահայտելու և ՄԻԱՎ-ի կարգավիճակի բացահայտմանն ուղղված հետազոտություն անցնելու անհրաժեշտության վերաբերյալ պատշաճ մասնագիտական տեղեկատվություն տրամադրելու մասին:

Հոդված 15. ՄԻԱՎ-ով վարակված երեխաների և նրանց ծնողների (օրինական ներկայացուցիչների) իրավունքները

ՄԻԱՎ-ով վարակված մինչև 18 տարեկան երեխաներն օգտվում են մինչև 18 տարեկան հաշմանդամ երեխաների համար Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված իրավունքներից:

ՄԻԱՎ-ով վարակված երեխայի ծնողները (օրինական ներկայացուցիչները) իրավունք ունեն՝

ա) երեխայի հետ գտնվել հիվանդանոցում, այդ ժամկետում ազատվելով աշխատանքից, և ստանալ երեխայի և իրենց համար սահմանված նպաստները.

բ) օգտվել տարեկան արձակուրդից իրենց հարմար ժամանակ:

ՄԻԱՎ-ով վարակված երեխային խնամելու նպատակով աշխատանքից ազատվելու ժամանակահատվածը հաշվառվում է աշխատանքային ստաժում:

(15-րդ հոդվածը փոփ. 19.03.09 ՀՕ-63-Ն)

Հոդված 16. ՄԻԱՎ-ով վարակված անձի պարտականությունները

ՄԻԱՎ-ով վարակված անձը կամ նրա օրինական ներկայացուցիչը պարտավոր է իրականացնել ՄԻԱՎ-ի տարածումը բացառող Հայաստանի Հանրապետության առողջապահության բնագավառի պետական լիազոր մարմնի~~լիազորված պետական մարմնի~~ կողմից հաստատված նախազգուշական միջոցառումները:

(16-րդ հոդվածը փոփ. 19.03.09 ՀՕ-63-Ն)

ԳԼՈՒԽ 4.1

(գլուխը լրաց. 21.03.18 ՀՕ-169-Ն)

ՄԱՐԴՈՒ ԻՄՈՒՆԱՅԻՆ ԱՆԲԱՎԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՎԻՐՈՒՍԻՑ ԱՌԱՋԱՑԱԾ ՀԻՎԱՆԴՈՒԹՅԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՊԵՏԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ

Հոդված 16.1. Մարդու իմունային անբավարարության վիրուսից առաջացած հիվանդության կանխարգելման նկատմամբ պետական վերահսկողությունը

1. Մարդու իմունային անբավարարության վիրուսից առաջացած հիվանդության կանխարգելման նկատմամբ պետական վերահսկողությունն

իրականացնում է Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած՝ վերահսկողություն իրականացնող տեսչական մարմինը:

ԳԼՈՒԽ 5

ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 17. Պատասխանատվությունը սույն օրենքը խախտելու համար

Սույն օրենքը խախտող անձինք, ինչպես նաև ձեռնարկությունները, հիմնարկները և կազմակերպությունները պատասխանատվություն են կրում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Հոդված 18. Օրենքի ուժի մեջ մտնելը

Սույն օրենքն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

Հայաստանի Հանրապետության
Նախագահ **Լ. Տեր-Պետրոսյան**

Երևան
15 փետրվարի 1997 թ.
ՀՕ-103